

571. Կոթող, գորշ գրանիտից. միջին պատվանգանին՝ 4 սող.

MICHAL  
WARTERESIEWICZ  
ZMARL 17. SIERPNIA 1893.  
W 53. ROKU ŻYCIA.

MICHAL/ WARTERESIEWICZ./  
ZMARL 17 SIERPNIA 1893/ W 53  
ROKU ŻYCIA.

Թարգմ.

Միքայել Վարդերեսովիչ. մահացավ  
1893-ի օգոստոսի 17-ին, կյանքի 53-րդ աս-  
րում:

572. Կոթող, գորշ գրանիտից: Վերուստ ագուցված երկաթե խաչին ձուլածո եղա-  
նակով պաակերված է Քրիստոսի խաչելուժյան անսարանը, որի աակ՝ Մարիամ Աստ-  
վածածինը՝ ձեռքերը խաչած: Ունի 9 սող եղծված գիր.

I N K I / TU SPOCZYWA S.P./ KS. IGNACY JAKUBOWICZ...

Թարգմ:

Յ(իսուս) Ն(պովրեցի) Թ(ագավոր) Հ(րէից)

Ասա Հանգչի ս(ուրբ) Հ(իշաակով) քաՀ(անա) Իգնասիոս Յակուբովիչը:

Կուռիի գերեղմանոցում են թաղված նաև Աննա Նիկոսևիչը (1849-1908), Թեոդոր Անանի-  
ևիչը (1838-1902), Հռիփսիմե Յողեֆովիչը (1858-1923), Յակոր (1810-1882) և Գրիգոր (1809-  
1888) Յակուբովիչները, Ագոպսովիչները, Գրիգորովիչները, Յանովիչները, Լուկասևիչները և  
րաղմաթիվ այլ Հայեր, որոնք, ցավոք, գեռևս իրենց կենդանության օրոք արգևն կորցրած ևն եղել  
մայրենի լեզուն:

### ՍՆՅԱՏԻՆ

Սնյասին քաղաքը գանվում է Իվանո-Յրանկովսկի մարզում: XIX դարի առաջին ասանամ-  
յակներին այստեղ ապրում էր 70 Հայ ընանանիք<sup>179</sup>, որոնք ունեին իրենց կրթամշակութային և  
Հոգևոր օջախները: Հայկական պամամաճարաարպեաական Հուշարձաններից Սնյասինում  
պահպանվել են կաթոլիկականին Հատուկ ոճավորմամբ կառուցված Ս. Ասավածածին եկեղեցին և  
սակավ քանակությամբ Հուշակոթողներ: Եկեղեցու ներսի պատերը ծածկված են եղել որմնակար-  
ներով, որոնցից միայն Հեաքեր են մնացել Հեաաղա նորոգումների պամաճառով: Համեմաարար  
լավ են պահպանվել առասաաղի նկարապարդումները: Այժմ եկեղեցու շենքը արամագրված է  
սպորային կաղմակերպություններին՝ ծառայելով իրրև մարղագաՀլիճ: Պատերի վրա ոչ մի ար-  
ձանագրություն չի պահպանվել, թեև Մ.Բժշկյանը նշում է. որ այսաեղ կան «դամրարանս Հայ  
գրով»<sup>180</sup>: Քաղաքային գերեղմանոցում Հայաաառ. արձանագրություններով ասպանաքարեր  
չնկաաեցինք. շրջաքայելիս մեր ուղագրությունը գրավեց 8 աողանոց Հեաեյալ ասպանաքարը:

179 Մ.Բժշկյան, էջ 125

180 Նույն տեղում:

Ksiadz  
**Michał Romaszkan**  
 proboszcz i kanonik obrz.orm.kat.  
 w Sniatynie  
 urodzony 3<sup>o</sup> wrzesnia 1823  
 zmarł 24<sup>o</sup> lutego 1906.  
 Prosi o pozdrowienie Anielskie

K S I A D Z / MICHAŁ /  
 ROMASZKAN / PROBOSZCZ I  
 KANONIK OBRZ. ORM. KAT. /  
 W SNIATINE. / URODZONY 3<sup>o</sup>  
 WRZESNIA 1823. / ZMARŁ 24<sup>o</sup>  
 LUTEGO 1906. / PROSI  
 POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Քսյոնզ (քահանա) Միքայել  
 Ռոմաշքան՝ Սնյատինի Հայոց կաթո-  
 զիկե եկեղեցու քարոզիչ-կանոնիկոս:  
 Ծն. 1823 թ. սեպտեմբերի 3-ին.,  
 վախճ. 1906 թ. փետրվարի 24-ին:  
 Խնդրում է հրեշտակների ողջույնը:

### ՏԻՍՄԵՆԻՑԱ

Տիւմենիցա գյուղաքաղաքը գտնվում է Իվանո-Ֆրանկովսկ մարզային կենտրոնից շուրջ 10 կմ հեռավորութան վրա: Այստեղ Հայերն ապրել են գեոեւս XVI դարի 40-ական թվականներից, սակայն թուրք-թաթարտեղան արշավանքների պատճառով հեռացել են այլ վայրեր: Նրանք Տիւմենիցայում կրկին հաստատվել են 1679 թ (գաղթել են Կամենեց-Պոդոլսկից): Սկզբում ունեցել են փայտաշեն եկեղեցի՝ Հիմնադրված XVII դարի 80-ական թթ., իսկ 1750 թ. կառուցել են Ս.Աստվածածին և Ս.Կայեթան եկեղեցիները: Ս.Աստվածածինը նույնպես այժմ գոյությունն չունի. այն քանդվել է դարիս 50-ական թվականներին:

Մ.Բժշկյանի այցելության ժամանակ այս քաղաքում ապրել է 50 Հայ ընտանիք<sup>181</sup> Քաղաքային գերեզմանատան կենտրոնական մուտքի աջ կողմում Հայ ազգաբնակչութունը 1828 թ. կառուցել է մի փոքրիկ մատուռ, որը քայքայված վիճակում գոյությունն ունի առ. այսօր: Սյս մասին նշված է Դոմինիկ Հիրովսկու աշխատություններից մեկում<sup>182</sup>: Ցավոք, նրա պատերին ոչ մի արձանագրություն չի պահպանվել: Կարևոր համարեցինք ընգորինակել հեաւեյալ վիմագրությունը, որ լիհերեն գրված է տապանաքարերից մեկի արևմտյան կողին.

574.

DOM

TU SPOCZYWA/ KS. JAN MARDYROSIEWICZ/ KANONIK I PROBOSZCZ OBR.  
 ORM./ PRZEŻYWSZY LAT 70 SPOCZAB W PANU/ DNIA 20.12. 1926 R. CZESĆ.

<sup>181</sup> Մ.Բժշկյան, էջ 124-126:

<sup>182</sup> Dominik Chirowski, Dzieje miasta Tysmienicy (25 ilustracyi), Wydanie I. Lwow, 1938.